են կատարում կեանքի մէջ եւ նորա ներքին էութիւնը կազմում։ Այս բոլորի մասին որոշ չափով նոր լոյս ենք ստանում արձանագրութիւններով, ձեռագրական յիշատակարաններով, շինարարական եւ այլ ստեղծագործական մնացորդներով։ ԺԳ. դարից յետոյ եկած ժամանակը համեմատաբար աւելի աղքատ է պատմական մատենագրութեամբ. եղածներն էլ չոր, ժամանակագրական բնոյթ են կրում. այդ պակասը մեծագոյն չափով լրանալ կարող է վերեւ յիշած աղբիւրների հաւաքմամբ եւ քննութեամբ, վերահայեցողութեան ենթարկելով այդ շրջանի մեր անցեալը իւր բովանդակ ծաւալով, որից բոլորովին այլ արդիւնք եւ պատկեր կ'ստանանք, քան ունինք այժմ։

Ահա մեր որդեգրած ճանապարհը հայ պատմութեան ուսումնասիրութեան, աւելի ճիշդ նորա մշակոյթի եւ արուեստի լուսաբանութեան, փաստացի եւ իրական հիմունքներով։ Շտապողական պիտի համարել այս ուղղութեամբ կատարուած աշխատանքները, մանաւանդ անհրաժեշտ ատաղձի հաւաքումն ու դասաւորութիւնը, որովհետեւ կործանարար ժամանակը եւ մարդկային բարբարոսութիւնն ու անհասկացողութիւնը կանգ չեն առնում իրենց ոչնչացման գործողութեան մէջ։ Ինչքա՜ն բան ենք կորցրել հէնց վերջին տասնեակ տարիներում։ Ինչպիսի՜ ահաւոր կորուստներ ունեցանք համաշխարհային նախընթաց պատերազմի ընթացքում, մնացածներն էլ մի կարեւորագոյն մասով անմատչելի դառնալով հայ մարդու ուսումնասիրութեան, ստեղծուած կացութեան հետեւանքով։ Բայց գոհանանք, ինչ որ փրկուած է, եւ աշխատենք մատչելի դարձնել, ինչ որ դեռ մնացած են աւերակ վանքերի պատերի վերայ, եւ առաւելութեամբ փոշիների տակ ծածկուած ձեռագիրների մէջ։

Այդ ուղղութեամբ որոշ աշխատանք կատարուած է արդէն էջմիածնի միաբանների ձեռքով, Ջալալեանի, Շահխաթունեանի, Ստ. Մխիթարեանի, Բարխուդարեանի, Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանի հատորներով, Ալիշանի համադրութեամբ Այրարատի եւ Սիւնիքի մէջ, Լալայեանի՝ իւր Աղղաղրական հանդէսի մէջ, Կոստանեանի (Վիմական Տարեգիր), Ուվարովայի, Մեսրոպ Մագիստրոսի, որոնք իրենց աւելի կամ պակաս գնահատելի կողմերի հետ, ունին աչքի ընկնող պակասութիւններ եւս։ Մեր համեմատութիւնները, արձանագրութիւնների նկատմամբ, ակներեւ են կացուցանում այդ հանգամանքը։ Բայց ասել չենք կարող, թէ մեր աշխատանքներն էլ առանց պակասութեան են այդ կողմից, որի մասին ակնարկեցինք վերեւ։ Միայն լուսանկարչական մեքենան է, որ իրականի անսխալ վերարտադրութիւնը կամ պատկերը կը տայ։

Արձանագրութիւնների հետ կարեւոր աղբիւրներ են յիշատակարանները. այստեղ եւս որոշ աշխատանք կատարուած է, ինչպէս Գարեգին Սրուանձտեանի, Փիրղալէմեանի, Ալիշանի, Լալայեանցի ժողովածուներն են, Տաշեանի, Ֆինկի եւ Լեւոն Գեանջեցեանի, Տիւրինգենի, Կոնիբիրի Բրիտանական Թանգարանի ցուցակները, Քարամեանի Բերլինի արքայական մատենադարանի հայ Ձեռագիրների ցուցակը։ Բարսեղ Սարգսեանի Վենետիկի Մխիթարեանց ՁՁ-ի ցուցակի առաջին հատորը, Մեսրոպ Մագիստրոսի անտիպ մնացած վիթխարի ցուցակը Էջմիածնի եւ այլ վայրերի ՁՁ-ի, Արտաւազդ արքեպիսկոպոսի Հալէպի եւ այլ վայրերի ՁՁ-ի ցուցակները, Ակինեանի եւ մեր անտիպ Ցիշատակարանների ժողովածուները. բայց այս ուղղութեամբ դեռ եւս շատ մեծ գործ կայ կատարելու։ Այդ յիշատակարանների մէջ անսահման եւ բազմապիսի նիւթեր կան մեր պատմութեան, մտաւոր եւ հոգեւոր կեանքի, մշակոյթի այլ եւ այլ կողմերի մասին, յատկապէս ներքին պատմութեան։

Այս Գ. հատորը այդ տեսակէտով ունի առանձին նշանակութիւն, նա ոչ միայն հիմքն է եւ աղբիւրը առաջին երկու հատորների համար, այլ ինքը իւր համար մի գործ է իբրեւ ատաղձ ուրիշ բանասէրների համար այս կամ այն նպատակով օգտագործելու։ Մէջ է բերուած եւ օգտագործուած նախընթաց հատորների մէջ աւելի քան 280 մեծ ու փոքր արձանագրութիւններ, շատերը առաջին անգամ բանասիրութեան մատչելի դարձած, եւ մօտաւորապէս 100 ձեռագրական յիշատակարաններ եւ մատենագրական հատուածներ, որ հաւաքել ենք երկար տարիների աշխատանքով, ձեռագիրների մէջ մէկ մէկ փնտռելով, քանի որ նրանց մեծ ժողովածուների տպագրուած ցուցակները դեռ պակասում են։

Ընթերցողը ինքնին նկատել կարող է, որ Ցաւելուածները թուագրուած են եւ նշանակուած նրանց օգտագործման երեսները նախընթաց հատորների մէջ, նաեւ պատկերի թիւը, եթէ ունի տուեալ Ցաւելուածը։ Այսպիսով ընթերցողը հնարաւորութիւն ունի վերստուգելու նրանց օգտագործման չափն ու կերպը, ինչպէս որ ուսումնասիրական հատորների մէջ նշանակուած համարներով (օր. Ցաւելուած Ա. 1, Ա. Գիրք եր. 10, կամ օր. Ցաւել. Բ. Ա. Գիրք. եր. 10) աւելի ընդարձակ տեղեկութիւն ստանալ նշանակուած աղբիւրի մասին։

Գ. գրքի սկզբում պատկերների ցանկով մատնանշուած են Ուսումնասիրութիւնների մէջ նրանց օգտագործման երեսները, որով եւ դիւրութիւն ընծայուած մասնագիտաբար հետաքրքրուողներին, աւելի տեղեկութիւններ եւ բացատրութիւններ ստանալ նրանց մասին։ Պոռչեանց իշխանութեան հետ կապուած հնագիտական վայրերի քարտէզը, տարաբաղդաբար, տալ չկարողացանք, որ նոյնպէս որոշ չափով կը նպաստէր տեղագրութեան աւելի դիւրին հասկացողութեան։

Ցիշատակարաններից մի քանիսը, Ցաւել. Բ. նշանակուած, թիւ 1, 13, 15–21, 43–46, 61, 62, 64, 69, 71, 72 չկան բոլորովին իրենց տեղերում կամ միայն քաղուածօրէն կան նշանակուած նախընթաց հատորների մէջ։ Որովհետեւ արտասահման դալիս մենք մտադիր չէինք Բ. եւ Գ. հատորները տպել երկրից դուրս, ուս-